լինէ, թէ «Սախրն ձիտ հետ չի տանիս, այլ թող տատ առ իս զձիտ եւ փոխէ զհանդերձդ եւ հին զձուռ ապա հագիր· զի տատ Քրիստոսն է»: Եւ ես այնպէս արարի, որպէս հրամայեաց: Եւ այնպէս չար էին Ենչարիքն, 25
որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ չուխայ ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ· այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց: Նաեւ առաջնորդաց չտային քննել հասչհաս կամ օրէնք պահել· զի թէ ոք կամէր կին 130
առնուլ եւ չհասութք լինէր, չերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ (երթային առ) Ենչարի մի եւ տային կաշառ, եւ նա դայր իրիցուն թօփուզով պսակ տայր առնել· եւ նա ակամայ պիտէր խօսիցն չելնէր· ապա թէ ոչ 135
բազում չարիս անցուցանէր ի գլուխն եւ ինաս եւ տուգանք ձգէր զնոսա· այլ եւ եկեղեցեաց եւ վանօրէից: Եւ Թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են, ապա Խարբերթ առաւել քան զամենայն: Ի Ստամպօլ սակաւ մի ունին միխթարութիւն քրիստոնեայք եւ վայելչութիւն, զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբութիւն ձայնիւ· հեծնուն ձի եւ ջորի, ագանին 140
եուզչլայ, եթմիշչլայ չուխայ· ուտեն, լմպեն, ուրախ լինին· ունին մեծամեծ տուն, էգիս եւ դրախտս եւ այլն· զոր յԱնատօլին բնաւ դայս ոչ երեւի· այլ տներն ախոռի նման, եւ չալուով, ցած· իսկ ի քաղաքն քարբիչով, դռվին փոքր եւ խորափտիտ, խաւարչտին: 145

135 յակամա: — 137 տուքանք: — 144 եթմիշչլա: